Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական երիտասարդական գիտաժողով

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ
Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս
Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

ձեռնարկատիրությունը, որից հիմնականում գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսություններն են:

Հանրապետությունում վերջին տարիներին օրենքով և կառավարության որոշումներով լուրջ քայլեր են ձեռնարկվում փախստականներին և վերաբնակիչներին սոցիալական աջակցության ուղղությամբ, կառավարության ուշադրության կենտրոնում են հայտնվել հասարակական կազմակերպությունները, յուրաքանչյուր տարի ավելացնելով նրանց դրամաշնորհները՝ դրանով իսկ խթանելով քաղաքացիական հասարակության ձևավորմանը և կայացմանը: Չի կարելի անտեսել նաև աշխատավորների, պետական ծառայողների՝ մասնավորապես ուսուցիչների և առողջապահության համակարգի աշխատակիցների աշխատավարձերի շոշափելի բարձրացումները:

Մի խոսքով, մեր պետությունը, որպես սոցիալական, իրավական և ժողովրդավարական, ինչպես ամրագրված է Սահմանադրության 1-ին հոդվածում, կայացած կհամարվի կայուն տնտեսության և իրավակարգի պայմաններում միայն, որտեղ լիարժեք կերաշխավորվեն մարդու և քաղաքացիական, և՝ տնտեսական, և՝ քաղաքական իրավունքներն ու ազատությունները:

Հարեթ Մարոյան
«Միտք երիտասարդական
վերլուծական կենտրոն» ՀԿ

Գիտելիքահենք տնտեսությունը՝ որպես զարգացման միակ հեռանկար

Համաշխարհային տնտեսությունը XXI-րդ դարում մտնում է զարգացման ուրույն փուլ, որը բնութագրվում է Վերազգային կորպորացիաների ակտիվ գործունեությամբ, պետական առևտրային քաղաքականության լիբերալիզացմամբ, պետական սահմանները դիտարկվում են ավելի շատ տնտեսական, քան քաղաքական կամ աշխարհագրական տեսակետից և այլն: Մարդու կենսական, աշխատանքի պայմանների բարելավումը, գիտատեխնիկական առաջընթացը ստիպում են համաշխարհային տնտեսությանը թևակոխել զարգացման նոր փուլ՝ ինդուստրիալիզմից անցնելով հետ/պոստ/ ինդուստրիալիզմին: Հետինդուստրիալիզմի կարևոր հատկանիշը մարդու կենսական պայմանները բարելավող, նրա ամենաչնչին պահանջմունքները բավարարող ծառայությունների ոլորտի գերակայությունն է նյութական արտադրության նկատմամբ: Բացի դրանից, հետինդուստրիալզիմը ունի ևս մի քանի կարևոր հատկանիշներ.

- Կառուցվածքային տեղաշարժերի արդյունքում աճում է ոչ միայն ծառայությունների, այլև գիտատար ճյուղերի տեսակարար կշիռը տնտեսության մեջ: Առաջանում է բարձր տեխնոլոգիաների ճյուղերի գերակայություն մյուսների նկատմամբ,
- Բարձրանում է ուշադրությունը արտաքին միջավայրի, մարդու կյանքի սոցիալական, մշակութային, կրթական պայմանների բարելավման նկատմամբ,
- Ստեղծվում է տեղեկատվական հասարակարգ,
- Զարգանում է փոքր և միջին ձեռնարկչատիրությունը և այլն:

Մարդկության զարգացման ընթացքում բարդացող հասարակական պահանջմունքը կարող է բավարարվել միայն գիտատեխնիկական առաջընթացի արդյունքում ստեղծվող արտադրանքով: Վառ օրինակ է բջջային հեռախոսների արտադրությունը, որտեղ յուրաքանչյուր նոր մոդել տարբերվում է մյուսից որևէ տեխնիկական նորույթով, որն ուղղված է մարդու պահանջմունքների բավարարմանը՝ հեռախոսները համալրվում են ֆոտո, վիդեո համակարգով, ունեն ինտերնետի մուտքի հնարավորություն: ԳՏԱ-ն խիստ կարևորվում է նաև ծառայությունների ոլորտում: Համաշխարհային ինտերնետային ցանցում առաջանում են սկզբունքորեն նոր ծառայություններ, որոնք արդյունք են ԳՏԱ-ի: Ակնառու օրինակ է GOOGLE EARTH ծրագիրը, որը հնարավորություն է տալիս ինտերնետով կապվել տիեզերական արհեստական արբանյակի հետ՝ նկարահանելով և դիտելով երկիր մոլորակի ցանկացած վայր բավականին փոքր մասշտաբով: Ծրագիրը մի կողմից կարող է օգտագործվել և մասնավոր՝ անհատի անձնական, և կոմերցիոն նպատակներով՝ տուրիստական կազմակերպությունների, միջազգային բեռնափոխադրողների հետաքրքրությունը բավարարելու համար:

Վերը նշվածից կարող ենք ենթադրել, որ եթե առաջներում աշխատանքի միջազգային բաժանումը հիմնվում էր պետությունների կողմից արտադրության որևէ գործոնի տիրապետման վրա, ապա այժմ այն ստացել է նոր երանգներ, վերածվելով ավելի շատ *աշխատանքի միջազգային տեխնոլոգիական բաժանման*: Աշխատանքի նման բաժանման պայմաններում շահում է այն պետությունը, որն ունի գիտատեխնիկական մեծ ներուժ. հենց այստեղ էլ առաջ է գալիս գիտելիքահենք տնտեսության գաղափարը: Ըստ այդմ, գիտելիքահենք տնտեսությունը "ուղղակիորեն հիմնված է գիտելիքի և ինֆորմացիայի արտադրության, օգտագործման և բաշխման վրա": Արտադրության ընթացքում ստեղծվող հավելյալ արժեքի գերակշիռ մասը բաժին է

ընկնում նրա կենսական ցիկլի սկզբնական օղակներին, երբ գիտահետազոտական աշխատանքների արդյունքում գծագրվում է նոր արտադրանքը, ստեղծվում է արտադրական նմուշը կամ տեխնոլոգիական գործընթացը: Համաշխարհային տնտեսության սերտաճման պայմաններում ապրանքի կենսական ցիկլի տարբեր օղակներ կարող են տեղակայվել տարբեր երկրներում, հետևաբար, համաշխարհային եկամտից առավել մեծ բաժին է ունենում այն պետությունը, որի տարածքում անց են կացվում ցիկլի սկզբնական փուլերը:

Հայաստանի պես սակավ բնական ռեսուրսներով ապահովված պետության համար զարգացման միակ ճանապարհը գիտելիքահենք տնտեսության ստեղծումն է: Չնայած վերջին տարիներին վերազգային կորպորացիաները իրենց գիտահետազոտական ստորաբաժանումները մայր երկրներից (գրեթե միշտ՝ զարգացած) տեղափոխում են զարգացող նոր ինդուստրիալ երկրներ, այնուամենայնիվ կենսական ցիկլի ինովացիոն հատվածը ստեղծվում է զագացած երկրների տարածքում՝ մյուս երկրները հիմնականում օգտագործվում են արտադրության նյութական գործոնների արդյունահանման համար: Հետևաբար, ցանկացած պետության ինքն է որոշում գիտելիքահենք տնտեսության ստեղծման անհրաժեշտությունը և ճանապարհները՝ համագործակցելով ՎԿ-ների միջազգային և համաշխարհային կառույցների մյուս երկրների հետ: Գիտելիքահենք տնտեսությանն անցման ՀՀ պատրաստակամությունը բազմիցս նշվել է ՀՀ պետական քաղաքականության ենթատեքստում: Դրանցից են թերևս ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտը գերակա ճյուղ հայտարարելու նախագահի որոշումը, կառավարության կողմից զարգացման համապատասխան ծրագրերի մշակումը, հանձնաժողովների ստեղծումը և այլն: Սակայն այդ հարցում իրական տեղաշարժ տեղի ունեցավ միայն վերջերս՝ Հայաստանի Հանրապետության Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին օրենքի ընդունմամբ, Ինովացիոն գործունեության հայեցակարգի մշակմամբ, ՀՀ-ում ինովացիոն համակարգի ձևավորման 2005-2010 թվականների ծրագրի մասին կառավարության որոշմամբ:

Գիտելիքահենք տնտեսության ստեղծման անհրաժեշտ պայմանը Ազգային ինովացիոն համակարգն է: ԱԻՀ-ը Հանրային և մասնավոր հատվածների այն ինստիտուցիոնալ միավորների միասնական համակարգն է, որոնց գործունեությունը և համագործակցությունը առաջացնում, փոփոխում, ներմուծում և սպառում է նոր տեխնոլոգիաները: Ընդունված է ԱԻՀ-ը բաժանել 5 հիմնական հատվածի.

- պետական մարմիններ, որոնք զբաղվում են ինովացիան քաղաքականության մշակմամբ, ինովացիոն համակարգի մոնիթորինգով, ինչպես նաև տարբեր մեթոդներով բարելավում են ազգային տնտեսության ինովացիոն միջավայրը,
- ինովացիոն գործունեությունը ֆինանսավորող առևտրային և ոչ առևտրային հիմանդրամներ և կազմակերպություններ,
- ինովացիոն գործունեությամբ զբաղվող գիտաարտադրական, գիտահետազոտական և այլ տիպի կազմակերպություններ,
- գիտական, կրթական ուսումնական հաստատություններ, որոնք զբաղվում են համակարգի կադրային ապահովմամբ,
- ինովացիոն գործունեության վերաբերյալ խորհրդատվության հատկացում:

Ինովացիոն համակարգի հատվածների միջև առկա փոխադարձ կապերի ու կախվածություն զարգացումն ու ապահովումը նրա գործունեության կարևոր նախադրյալներից են: Հաճախ գիտահետազոտական կազմակերպությունների կողմից ստեղծված նորարարությունը չի մտնում արտադրություն՝ այդպիսի կապերի բացակայության կամ թույլ լինելու պատճառով: Արդյունաբերական ձեռնարկությունները՝ ուսումնասիրելով շուկայական պահանջարկը, գիտահետազոտական կազմակերպություններին ներկայացնում են իրենց պահանջները նորարարության նկատմամբ, այդ դեպքում ստեղծված նմուշը ունի շուկայական պահանջարկ, հետևաբար, նրա թողարկումը շահավետ է ձեռնարկությունների համար: Այսպիսով, բացի հիմնարար գիտական հետազոտություններից, փորձարարական և կիրառական գիտական հետազոտությունները իրականացվում են նրանց հետագա առևտրայնացման նպատակով: Ֆինանսական հատվածը ապահովում է ինովացիոն ձեռնարկությունների գործունեությանն անհրաժեշտ դրամով, ֆինանսավորում է գիտական կազմակերպությունների հիմնարար հետազոտությունները, ինչպես նաև օգնում է ինովացիոն փոքր և միջին ձեռնարկչատիրության սուբյեկտների կայացման հարցում: Ինովացիոն գործունեության խորհրդատվությունը վերաբերվում է հիմնականում մտավոր սեփականության պաշտպանությանը, ինովացիոն կառավարման ներդրմանը, շուկայում նոր արտադրանքի առաջխաղացմանը և այլն:

Այսպես, ՀՀ-ին՝ գիտելիքահենք տնտեսության ստեղծման համար անհրաժեշտ է.

- Ստեղծել գործող ինովացիոն համակարգ,

- Հայտարարել բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման գերակայությունը և նրանց զարգացման քաղաքականություն անցկացնել,
- Խթանել բարձր տեխնոլոգիաների ներկրումը՝ արտոնագրերի, ֆրանչայզինգի, ռոյալիթիների տեսքով,
- Ստեղծել գիտական ներուժի պահպանման և զարգացման կայուն համակարգ,
- Ֆինանսավորել պետական կարիքների համար առաջնային գիտական հետազոտությունները,
- Ասպիրանտուրաների, մագիստրատուրաների, պետական պատվերի բաշխման միջոցով զարգացնել գիտության առաջնային ոլորտները,
- Խթանել բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարվող արտաքին ուղղակի ներդրումները:

Ամփոփելով, նորից նշենք, որ Հայաստանի համար միջազգային շուկայում մրցակցային առավելությունների ստեղծման միակ աղբյուրը նրա գիտական ներուժն է: Գիտական ներուժի վատնումը վերջին հաշվով կհանգեցնի նրան, որ Հայաստանը իր տնտեսական զարգացմամբ հետ կընկնի տարածաշրջանի երկրներից, ինչը սպառնում է հետագա ավելի մեծ բարդություններով, հետևաբար, գիտելիքահենք տնտեսության ստեղծումը հասարակության և պետության համար ռազմավարական նպատակ պետք է դառնա:

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,

ПОЛИГРАФ